ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 61

«07» սեպտեմբերի 2020 թվական գյուղ Թորոսգյուղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՑՈՂԱՄԱՐԳ, ՓՈՔՐ ՍԱՐԻԱՐ ԵՎ ՁՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 4-րդ մասի 2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 22 որոշումը, աճուրդներ և մրցույթներ կազմակերպող ու անցկացնող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատի համայնքային հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 14-ի թիվ թիվ 29, 30, 31, 32, 33 և 34 արձանագրությունները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Ցողամարգ, Փոքր Սարիար և Ձորաշեն բնակավայրերում գտնվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության հողերից վարձակալության իրավունքով տրամադրել՝ համաձայն հավելվածի:

2. <<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԲԸ-ի հետ կնքել սույն որոշման հավելվածում նշված հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման պայմանագրերը և դրանցից բխող իրավունքները ներկայացնել օրենքով սահմանված կարգով պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«07» սեպտենբեր 2020 թվական
գյուղ Թորոսգյուղ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարապատ համայնքի ղեկավարի
2020 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 61 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հ/Հ	Հողամասի գտնվելու վայրը	Հողամասի հասցեն	Անուն, ազգանուն, հայրանուն	Հողամասի ծածկագիրը	Հողամասի մակերեսը (հա)	Հողամասի նպատակային նշանակությունը	Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը)	Օգտագործման տրամադրման նպատակը	Վարձակալության տարեկան վճարի մեկնարկային /առավելագույն գինը (դրամ)	Հողամասի վարձակալության տրամադրման ժամկետը (տարի)
1	Սարապատ համայնք (Ցողամարգ բնակավայր)	1-ին փողոց հողամաս 40	<<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԲԸ	08-112-0109-0026	0,02	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Կապի	Բջջային կապի սպասարկման	457143/480000	25
2	Սարապատ համայնք (Փոքր Սարիար բնակավայր)	4-րդ փողոց հողամաս 17	<<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԲԸ	08-116-0111-0068	0,02	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Կապի	Բջջային կապի սպասարկման	457143/480000	25
3	Սարապատ համայնք (Զորաշեն բնակավայր)	3-րդ փողոց հողամաս 31	<<ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ>> ՓԲԸ	08-074-0134-0009	0,02	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	Կապի	Բջջային կապի սպասարկման	457143/480000	25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ